ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-Ի ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «03» հուլիսի, 2014 թվականի

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Պետություն), ի դեմս Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, որի անունից կանոնադրության հիման վրա հանդես է գալիս՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը, մի կողմից, և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ձեռքբերող), ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Արամ Անանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ, առանձին՝ Կողմ, համատեղ Կողմեր), հիմք ընդունելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) **Ծրագիր՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագիր, որը նախատեսում է Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի շինարարություն:
2) **Որոշում՝** Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում:
3) **Օտարվող տարածք՝** տարածքներ, որոնց նկատմամբ Որոշումով ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ:
4) **Սեփականություն՝** Ծրագրի իրականացման համար օտարման ենթակա սեփականություն:
5) **Արձանագրություն՝** Սեփականության նկարագրության արձանագրություն:
6) **Սեփականատեր՝** Սեփականության սեփականատեր և/կամ Սեփականության նկատմամբ գույքային իրավունք ունեցող անձ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Ձեռքբերողը պարտավորվում է Օրենքով, Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում Օտարվող տարածքներում իրականացնել սեփականության օտարման գործընթացը:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Ձեռքբերողը պարտավոր է կատարել հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարելու գործընթացի ընթացքում առաջացած ծախսերը:
2) Ձեռքբերողը պարտավոր է Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել սեփականության օտարման գործընթացը (այդ թվում պատշաճ ձևով ուղարկել պայմանագրի նախագիծը և այլ փաստաթղթեր):
3) Ձեռքբերողը պարտավոր է Պետությանը զերծ պահել ցանկացած վնասից, որը կարող է առաջանալ սեփականության օտարման գործընթացում կամ դրա հետևանքով՝ կապված փոխհատուցման անհամարժեքության հետ: Վնասի առաջացման դեպքում Ձեռքբերողը պարտավոր է այն հատուցել ամբողջ ծավալով:
4) Ձեռքբերողը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7 (յոթ) օրվա ընթացքում այն պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց:
5) Ձեռքբերողը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել Որոշումից ծագող օտարվող սեփականությունների նկատմամբ Օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների սահմանված կարգով գրանցումը:
6) Ձեռքբերողը պարտավոր է Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում կազմել Արձանագրություն և դրա մեկ օրինակը, այն կազմելուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) օրվա ընթացքում, պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց:
7) Ձեռքբերողը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում ապահովել դրա հրապարակումն ոչ պակաս, քան 3000 տպաքանակ ունեցող զանգվածային լրատվական միջոցով:
8) Պետությունն իրավունք ունի Ձեռքբերողից պարբերաբար պահանջել ներկայացնելու տեղեկատվություն՝ Պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքի մասին:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կողմերն իրենց իրավասության սահմաններում Օրենքի, Որոշման կամ Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

1) Պայմանագրով ստանձնած պարտականությունները մասամբ կամ ամբողջովին չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա անհաղթահարելի ուժի, այսինքն՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, պատերազմների, ռազմական գործողությունների և համանման այլ հանգամանքների հետևանք է հանդիսացել և, եթե այդ հանգամանքները Պայմանագրի կնքման պահին անկանխատեսելի բնույթ են կրել, ի հայտ են եկել

Պայմանագրի կնքման ամսաթվից հետո և անմիջականորեն ազդել են դրա կատարման վրա:

2) Անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման դեպքում Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափ: Կողմը, որի համար վերոհիշյալ պատճառներով Պայմանագրով պարտավորությունների կատարումն անհնարին է դարձել, պարտավոր է գրավոր տեղեկացնել մյուս Կողմին նման հանգամանքների առաջացման կամ վերանալու մասին 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
3) Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է 2 (երկու) ամսվա ընթացքում, ապա Կողմերը պետք է քննարկեն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ Պայմանագրի լուծման հարցը, այդ մասին Պայմանագրում կատարելով համապատասխան փոփոխություն կամ լրացում:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է (բացառությամբ Կողմի գտնվելու վայրի հասցեի), եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Պայմանագրում Կողմի գտնվելու հասցեի փոփոխությունը համարվում է կատարված այդ մասին մյուս Կողմին պատշաճ ձևով ծանուցելու պահից:
2) Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:
3) Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Որոշումն ուժի մեջ մտնելու պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների կատարման ավարտը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պետություն»	«Ձեռքբերող»
Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 2.	ՀՀ, ք. Երևան, Զոր. Անդրանիկի 1
Նախարար	Գլխավոր տնօրենի պաշտոնակատար
_____ Երվանդ Զախարյան	_____ Արամ Անանյան
ստորագրություն	ստորագրություն